




1-855-626-0002
www.orientationontario.ca



▶▶▶ Շանօթանանք Օնթարիոյի

ՆԵՐԳԱՂԹ

ՄՇՏԱԲՆԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Օնթարիո հնարաւորութիւններու ծրագիրը (Opportunities Ontario: Provincial Nominee Program) կ'ընտրէ անհատներ եւ իրենց ընտանիքները մշտաբնակ կարգավիճակի, նախապէս գործի ընդունուած ըլլալու հիման վրայ գաւառին մէջ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար (Opportunities Ontario)-ի մասին, հեռաձայնեցէ՛ք **1-800-461-6348** կամ այցելեցէ՛ք www.ontarioimmigration.ca կամ findlink.at/ONT_PNP

Օնթարիո Հնարաւորութիւններ (Opportunities Ontario) ծրագիրը ունի տարբեր նախագծեր:

Արտասահմանցի աշխատողի նախագիծ

Գրաւելու համար տնօրէնական, մասնագիտական կամ արուեստական պաշտօն մը, գործատու մը կրնայ դիմել ունենալու պահանջուած պաշտօնը: Երբ պաշտօնը ընդունուած է, արտասահմանցի աշխատողը կ'ամբողջացնէ ընտրուելու դիմումագիրը:

Ներդրողներու նախագիծ

Ընկերութիւնները կարող են դիմել դիրացնելու ներգաղթի գործողութիւնը հիմնական պաշտօնէաներու համար այս ծրագրին միջոցաւ:

Աշխատանքի հրաւեր ունեցող ուսանողներու նախագիծ

Շրջանաւարտները կարող են դիմել, երկու տարուայ ընթացքին աւարտելէ ետք, երկամեայ վկայականի կամ ուսման մասնագիտութեան ծրագրի մը, կամ բարձր ուսման միամեայ վկայականի ծրագրի Օնթարիոյի մէջ: Դիմողները պէտք է ունենան մշտական եւ լման ժամանակի

արուեստի գործի առաջարկ, տնօրէնական, մասնագիտական կամ արուեստական պաշտօնի մը: Գործատուն պէտք է դիմէ, աշխատողը աշխատանքի ընդունուելու համար, Opportunities Ontario-ի կողմէ:

Ph.D. եւ Masters աստիճան ունեցողներու նախագիծ

Ph.D. եւ Masters աստիճան ունեցողներ, որ աւարտած են Օնթարիոյի համալսարանային համալսարանի մը ծրագիրը, կարող են դիմել, ծրագիրը աւարտելէն ետք մինջէ երկու տարուայ ընթացքին: Աշխատանքի առաջարկներ պահանջուած չեն:

ՖԵՏԵՐԱԼ ԾՐԱԳԻՐՆԵՐ ՄՇՏԱԲՆԱԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ

Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւեալ ծրագիրներու մասին, այցելեցէ՛ք Immigration, Refugees and Citizenship Canada: www.cic.gc.ca կամ findlink.at/applyImmCa

• Գանատական գործի փորձառութեան դասակարգ

Մարդոց համար որոնք ունին տնօրէնական, մասնագիտական կամ արուեստական դիրքի մը մէջ առնուազն 12 ամիս լման ժամանակի Գանատական գործի փորձառութիւն:

• Ֆետերալ հմուտ գործաւորներ

Մարդոց համար որոնք ունին յարմարելու պահանջները, ինչպէս արուեստական փորձառութիւն, ուսում, լեզուական կարողութիւն եւ բաւարար դրամ իրենց անձը և ընտանիքը ապահովելու Գանատայի մէջ:

• **Արհեստներ**

Այս ծրագիրը այն մարդոց համար է, որոնք ունին առնուազն երկու տարուայ լման ժամանակի փորձառութիւն արհեստի մը մէջ, եւ ունին լման ժամանակի գործի առաջարկ կամ Օնթարիոյի վկայագիր իրենց արհեստին մէջ:

• **Ներդրողներ և գործարարներ**

Այն մարդոց որոնք ունին նուազագոյն ներդրում մը գործի մը մէջ, նշանակուած ներդրող խումբի մը կամ ֆինանսական հիմնադրամի մը կողմէ Գանատայի մէջ:

• **Ինքնագործ մարդիկ**

Այս ծրագիրը այն մարդոց է որոնք կը ցանկանան ըլլալ ինքնագործ Օնթարիոյի մէջ մշակութային գործունէութիւններու, մարզանքներու կամ ազարակ կարավառելու եւ պարտիզպանութեան մէջ:

• **Ընտանեկան հովանաւորութիւն**

Մշտաբնակները կամ Գանատացի քաղաքացիները կարող են հովանաւորել որոշ ընտանիքի անդամներ ներգաղթելու համար: Յարմար ընտանիքի անդամները կը ներառեն գործընկերներ, ենթակայ մանուկներ, ծնողներ, մեծ հայրեր եւ ուրիշ ազգականներ: Հովանաւորները պէտք է եկամտուի պայմանները ունենան ցոյց տալու թէ անոնք կարող են իրենց ընտանիքը խնամել:

• **Տունի մէջ ապրող խնամողներ**

Յարմար բանուորները կարող են դիմել ըլլալու տունի մէջ ապրող խնամողներ մանուկներու, տարեցներու կամ անկարող մարդոց համար: Խնամողները պէտք է որ ունենան գրուած պայմանագիր գործատուի մը հետ Գանատայի մէջ: Երկու տարի լման ժամանակ աշխատելէ ետք, խնամողները կարող են դիմել մշտաբնակի կարգավիճակի:

